Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի N 2 արձանագրությունից (հարցման կարգով)

ԼՍԵՑԻՆ.- «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» շրջանակներում իրականացվող 19YR-5B038 ծածկագրով **«Զարգացման տարածքային անհամաչափության պատճառների կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գիտական թեմայի (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Արմենի Հայրապետյան) 01.09.2019 - 31.08.2020 ժամանակահատվածն ընդգրկող ընթացիկ հաշվետվության մասին հարցը:

Հաշվետու ժամանակաշրջանում, համաձայն հետազոտական խմբի կողմից նախապես կազմված ժամանակացույցի, նախատեսված է եղել հետևյալ աշխատանքների իրականացում՝ ըստ եռամսյակային փուլերի. 1) զարգացման տարածքային անհամաչափության գնահատման մեթոդաբանության ուսումնասիրություն, մեթոդների առավելությունների և թերությունների վերլուծություն, առավել նպատակահարմար մեթոդի ընտրություն կամ նոր մեթոդի մշակում, ՀՀ-ում զարգացման տարածքային անհամաչափության գնահատում, 2) ՀՀ-ում զարգացման տարածքային անհամաչափության կառուցվածքի և գործոնների վերլուծություն, պատճառների վերհանում և դրանց նշանակալիության գնահատում, 3) զարգացման տարածքային անհամաչափության վերհանված պատճառների հաղթահարման օտարերկրյա փորձի ուսումնասիրություն, 4) զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման կառուցվածքային ուղիների ուսումնասիրություն: Հաշվի առնելով համաճարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումները՝ հետազոտական խումբն իր աշխատանքների ժամանակացույցում կատարել է որոշ փոխատեղումներ և իրականացրել աշխատանքներ, որոնց կատարումն ի սկզբանե նախատեսված էր 2020 թ. սեպտեմբերից մինչև 2021 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում: Մասնավորապես՝ կատարվել է զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման ֆինանսական ուղիների որոշ ուսումնա-սիրություն, ինչի արդյունքում հետազոտական խումբը կկարողանա ժամանակին ավարտել ոչ իր մեղքով հետաձգված աշխատանքները: Կատարված մեթոդաբանական ուսումնասիրությունները, զարգացման տարածքային անհամաչափության գնահատման մշակված գործիքակազմը, տվյալների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, միջազգային փորձի ուսումնասիրությունը, զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման գործիքակազմի շտեմարանի մշակման աշխատանքները, զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման կառուցվածքային ուղիների ուսումնասիրությունն ու դրա արդյունքների հրապարակումը միջազգային գիտական ամսագրում, ինչպես նաև զարգացման տարածքային

անհամաչափության հաղթահարման ֆինանսական ուղիների որոշ ուսումնասիրությունը բավարար հիմք են ձևավորել հետազոտության հետագա փուլերի իրականացման և վերջնական արդյունքների ձևավորման համար, ինչպիսիք են զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման՝ տեղայնացման ենթակա օտարերկրյա փորձի և բացահայտված ուղիների գործադրման արդյունքների վստահելի կանխատեսումը, ՀՀ-ում զարգացման տարածքային անհամաչափության հաղթահարման հայեցակարգի, տեսլականի և ռազմավարական նպատակների համալիրի մշակումը, ինչպես նաև ռազմավարության ամբողջականացումը, ցուցիչների և միջոցառումների նախագծումը: Գիտական արդյունքներն են՝ 1) Hayrapetyan, R., & Mnatsakanyan, T. (2020). The Efficiency of Local Governance: Large or Small Units (the Armenian Case), Regional Science Inquiry (հրատարակման գործընթացում է), 2) Հայրապետյան Ռ., Ասատրյանց Ս., Մնացականյան Տ., Զարգացման տարածքային անհամաչափություն. գնահատման մեթոդաբանությունը և իրավիճակը ՀՀ-ում (որպես կոլեկտիվ մենագրության մաս, ավարտված է):

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Հավանություն տալ** «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» շրջանակներում իրականացվող 19YR-5B038 ծածկագրով **«Զարգացման տարածքային անհամաչափության պատճառների կրճատման գործիքակազմի կիրառման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գիտական թեմայի (գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Արմենի Հայրապետյան**) 01.09.2019 - 31.08.2020 ժամանակահատվածն ընդգրկող ընթացիկ հաշվետվությանը և այն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտե: Գիտական խորհրդի 60 անդամից քվեարկել են 57-ը (կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չեն քվեարկել 2-ը, արձակուրդում է 1-ը):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2020 թ. սեպտեմբերի 15
Երևան